

ԲԱԶՄԱՎԵՊ

* ՀԱՆԴԻՍԱՐԱՆ *

1843-1895

ՀԱՅՈՐ ԵԳ ՀԵ

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՏԱՐԵԳԻՐՔ ՀԱՅՈՅ

Ի ԱԽԱՅ ԵՒ Օ ԼԱԽՈՅ Ե ՐԿՐԻ

(Տես յէջ 487)

1430 Թվ. Ֆռանգաց ՌԵՆ. վախճանեցաւ Փնեալ Վիդուլդ, որ էր քաջ և արի ընդդէմ թշնամեաց իւրոց զօր և գդապարն (Թաթարք) մինչեւ իւր գախուցն (աթոռ աէրութեան) որ կոչի Ղրիմ, մինչեւ ի այն հալածեաց և կոստորեաց, և զ' 20,000 դադարն գերի վարեց, և երեր ի այսմ Լիդվայի երկիր (Լիդուանիա), և անդ բնակեցոյց զնսաս. որք են այժմ ի Վիհնային գաւառն՝ այնոքիկ են յօրէն յայնմանէ:

1434 Թվ. Ֆռանգաց ՌԵՆԼԳ. Եկայլոյ (Եակելլոն) էառ զՄաճրաց երկրին զդախմբն. այս Եկայլոյ երեք եղբայր ունէր. Վեդուլդ, Եվեարհոյլոյ և Կորէկալ:

1444 Կամինիցս ջրհեղեղ եկաւ, և զբերդն աւերեց, և զջրաղացքն տարու. և շատ պակասութիւն արաւ աշխարհի. մարտի 22, օրն կիրակի, ի պարօնութեան Տիտրիփին: Եւ ի նոյն ամին խարեց Մանային գիւախնին (Լէկը), և կամեցաւ զբերդն տալ, և ոչ ետուր:

1448 Թվ. ՊՂՋ. Կատաւ ի թագաւորութիւն Փազմիր թագաւորն, որ էր հայրն Զիկմանդին. և վախճանեցաւ ՁԽԱ. (1492):

1450 Մեծ կոխ արաւ Եկայլոյ ի հետ Բրուսին. և յաղթեցին զԲրուսն:

1454 Թվ. ՌԵՆԾԻ. Գազմիր թագաւորն կոխ արար ի Վոյնցային տակն:

1467 Թվ. ԶԶ. Մնաւ Զիկմոնդ թագաւորն. որ է որդի Փազմիր թագաւորին, յունուարի առաջին օրն, որ է նոր արքի:

- 1475 Ան ազգն Տաճիկն զԱեղովն այրեց . զոր յետոյ Շտեֆան վոյվուան զիւրեանք կոտորեց մինչ իսպառ .
- 1475 Թվ. Զիդ . Տաճիկ ազգն էտո զկափա՛ ի ձեռաց Ֆուանդացն ազդին :
- 1483 Թվ. Զլի . Ան ազգն Տաճիկ էտո ի քրիստոնէից ձեռացն զկիլին (Քիլիս) և զԱզքէրմանն :
- 1484 Թվ. Զլդ . Եկաւ թուրքն և զկիլին և զԱյկէրմանն էտո իւր ձեռաց տակ :
- 1485 Թվ. Նլդ . Օգոստոսի ամսոյն Շտեֆան վոյվուան Օլախի (Վլահը) երկրն՝ հոլտովադ (Հպատակութիւն) արաւ Քազիմիր թագաւորին իլախաց երկրն :
- 1485 Թվ. Զլդ . Երկուսում անդամ Թուրքն զԱեղովն այրեց :
- 1494 Թվ. Զիգ . Զնհնուտ ազգն ի այսմ Լիդվայի երկրէն վարեցին և հալածեցին :
- 1497 Թվ. Զիջ . Հոկտեմբ . 25. Ըզօլպրախտ թագաւորն իլախայ՝ անհաւատ և խարերայ ազգն որ կոչի Օլախ , կոտորեցին ի Պուգովինան , Շտեֆան պարոն :
- 1497 Թվ. Զիջ . Իլախ թագաւորն Օլպարախտ (Ալբերտ) անուն՝ Օլախաց երկրի վերայ գնաց :
- 1498 Թվ. Զիլ . Եկաւ Մալգոշն ? Տաճիկ : Եւ ի նոյն ամին եկաւ Շտեֆան վոյվուայ Օլախաց՝ ի վերայ Կամենիցոյս . և պատնէլ արաւ ութշաբաթ :
- 1502 Թվ. Զնկ . Վաղաննեցաւ Տէր Խաչատուր եպիսկոպոսն , որ էր ազնիւ և աստուածաբան վարդապետ :
- 1503 Թվ. Զնե . Ըստըմպօն՝ զտէր Յովհաննէսն , զտէր Դաւիթն , զտէր Սարգիսն՝ որք էին յիշմիածնայ նվիրակք , նահատակեցան , մատնելով ի ձեռս . և վասն ամենդութեան նոցա ի յերկնից մեծապքանչ լոյսն ճառագայ . թեց ի վերայ մարմնոյ նոցա . զոր Տէր Աստուած տացէ մեզ ամենեցուն ըզնոյն մասն և բաժին՝ զոր նոքա ընկալան ի Տեառնէ :
- 1506 Թվ. Զնե . Օգոստոսի 19. Վաղաննեցաւ թագաւորն Ալեքսանդր իլախաց աշխարհի : — Եւ ի նոյն ամին երեւէր ագեւոր աստղն :
- 1507 Թվ. Զնջ . Նոտուտ ի թագաւորութիւն Զիկմոնտ բարեպաշտ թագաւորն մեր , փետրուարի վեց . և վաղաննեցաւ Թվ. ԶՂլ . (1548) , ի օրն սըրբոյ Զատկին :
- 1509 Թվ. Զնէ . Փետրուարի 21. Քնազ Կոստանդին կոտորեց զիադարն 1200 ի Պիլցէռքովէն (Belozerkəf Տաւրիդիան նահանգի) Հօրօստաղան (Horodiszcze) ի Զէրքաք գաւառի Ռուսաց) և ազատեց 9000 գերիք ի ձեռաց անօրինաց :
- 1509 Թվ. Զնջ . Վարդապառի ութ աւուրն եկաւ Պոհատան Օլախի վոյվուան իլովի վերայ :
- 1514 Թվ. Զկդ . Սեպտեմբերի 8 , եղաւ կոիւն Օրշային . զոր Աստուծոյ աջողութեամբ գնազ Կոստանդին 14,000 հոգով կոտորեց զՄուգովցիքն 80,000 :
- 1519 Թվ. Զկը . Եղաւ Մագալին կոիւն , զոր անհաւատ ազգն կոտորեց Թագարն զիլախն , վասն շմիաբանութեան քրիստոնէիցն :

1519 Թվ. Զկթ. Մնաւ Զիկմնդ թագաւորն՝ որ կոչի Ակուստ. վասն այն կոչի Ակուստ՝ զի Օգոստոս ամսոյն ընծայեցաւ, և թագաւոր օֆեցին ի կենա շանութեան հօրն, որ էր թվն. ԶԶթ (1530) յորժամ օծաւ, Փետրուար 20:

1520 Թվ. Զկթ. Սուլէմանն Խոնդիքարն նստաւ ի կայսրութիւն:

1524 Թվ. ԶՀԳ. Եկաւ Դադարն յիւսվին վերայ, և էանց ի Ս. Գլուխայ առջեւէն, որ է Ըստի (Ուսաց) եկեղեցի, և գնացին մինչեւ ի Ետարասլովն, և դարձաւ. զոր զՄիքալյն սպաննեցին զիւովցին՝ Աղեցքոյին զորդին:

1526 Թվ. ԶՀԵ. Սեպտեմբեր ամսոյ. ան ազգն Տաճկաց Խոնդիքարն Առևլէյման՝ Կոստորեց զՄաճար ազգն, և զթագաւորն Լուտվիկ փախստական արար. և ոչ գիտացին թէ զի եղեւ թագաւորն, և զՊուտին քաղաքն՝ որ էր գախթն Մաճարաց՝ էառ:

1527 Թվ. ԶՀԶ. Գնազ Կոստանդին կոստորեց զՄաճարն, Քէրօրմանէն այսկոյս հինգ միլ, և էին 25,000:

1530 Թվ. ԶՀԹ. Գնազ Կոստանդին վաղջանեցաւ. զոր բազում քաջութիւնն ցուցեալ փոխեցաւ առ Քրիստոս:

1535 Թվ. ԶՀԴ. Բան Դառնովոսից էառ զՄարտուապն զՄաքովի Բերդն. օգոստոսի 29:

1536 Թվ. ԶՀԵ. Ի կամենեց քաղաքն մեծ քամի ելաւ, և 133 տուն կործանեց. և ի նոյն ամին երկիր շարժեցաւ:

1538 Թվ. ԶՀԷ. Սեպտ. 17. Եկաւ Խոնդիքարն սուլուան Սուլյյման՝ ի Օլախաց երկիրն, և զիեղբ պարոնն ի յերկրէն եհան, և ընկաւ փախըստական:

1538 Թվ. ԶՀԷ. Ապրիլի 7 օրն Աւետման Ս. Աստծուածանին՝ արեգակն խաւարեցաւ:

1545 Ի Թվ. Հայոց, ԶՂԴ. Մարտի 11 օրն, Ս. Թորոսի շար(աթուն), մեծ ջուր եկաւ և զՀայու Զրազաշն աւերեց, և զերկու խազակն (իրմուղ?) քաղքին, և այլ շատ պահառութիւնն առաւ քաղքին (կամենիցու):

1545 Թվ. ԶՂԴ. Ապրիլի 20. Պարոն Նրիհորն փառաւոր և գեղեցիկ զանկակ երես ի. Ս. Նիկոլայ եկեղեցւոյ, յիշատակ իւրին և իւր հաւասար ննջեցելց հոգուն համար. ամէն:

1547 Ի Թվին Հայոց ԶՂԶ. Օգոստոսի 14 Ս. Աստուածածնին, եկն Ֆրանչ զի եպիսկոպոսն ի Ս. Աստուածածնին եկեղեցոյ, և քարոզեց երկու անկամ:

1567 Ի Թվին Հայոց ԶՂԶ. Սեպտեմբեր ամսոյ 10 կամենից քաղքին մեծ մահ եղաւ. Ֆրանչ ազգն և Ծրուզ ազգն խիստ շատ մեռան: Յետոյ այլ կրկին անկամ մեծ մահ եղաւ թվին ԶՂԵ. և այն յետի մահուն այլ շատ մեռան քան զաւաշինն:

1547 Ի Թվին Հայոց ԶՂԶ. Կամենից քաղաքին ջուր՝ կանանչ դարձաւ. որ բնաւ այդպէս բան չէր եղեալ. զէրայ մահուն ցուցակ էր:

1548 Ի Թվին Հայոց ԶՂԷ. Ապրիլի մէկ, օրն Զատկին կիրակի բարեպաշտ թագաւորն մեր Զիկմոնդ առ Աստուած փոխեցաւ. Աստուած զիւր հոգին լուսաւորէ:

1548 Ի Թվին Հայոց ԶՂԷ. Բարեպաշտ թագաւորն մեր Զիկմոնդ Ակուստ դուս՝ ի թագաւորութիւն նստաւ. զոր Տէր Աստուած ժամանակն երկայնակեաց և զիւր մէկ օրն հազար այնէ:

1549 ի թվին Հայոց ԶՂԲ. տէր Ստեփանոս Ըստամբօլու պատրիարքն եկն ի Կամենից, և կամենիցն քարոզեց:

1549 թվ. ԶՂԲ. Տէր Վարդերեսն Թորոսին որդին մէկ գեղեցիկ և փառաւոր զանկակ երես ի Ա. Աստուածածնին եկեղեցւոյ, յիշատակ իւրին նըն-ջեցելոց: Եւ ի նոյն ամին եկաւ Դաւիթ վարդապետ մի, և Տէր ՄԵՔԻՒՆ-գեկ կրօնաւոր ի կամենից քաղաքն, և քարոզեց: և իւր ստրկաւագ մի կայր Ազատ անուն, մահին վաղճանեցաւ. Աստուած ողորմի իւր հոգուն:

1550 ի թվին Հայոց ԶՂԲ. Օլախի պարոնն հեծեալ ղրկեց Պարին վերայ՝ որ զիրէդպիչն բռնէին. և աստուածային զօրութեամբ և Ա. Հոգուոյն կարողութեամբ, երկու երեք հարիւր հոգով զՈլախն հեծելն ջարդեց. զորն ջարդեց, և զայն ի ջուրն ընկղմեց, աստուածային օգնականութեամբ: (Ո՞Վ զով Հարդեց):

1551 ի թվին Հայոց Ռ. Տէր Մակար եպիսկոպոս և Տէր Յակոբ եպիսկոպոսն և Տէր Մարկոս կրօնաւոր նուիրակ եկան:

1551 թվ. Ռ. Շտեֆան պարոնին զորդին՝ անունն իւոն Վոյվուայ էր, բրին որ Օլախաց երկիրն տէր դնէին, և ոչ դրին. քանզի երկիրն շտըր-վեցաւ:

1551 ի թվին Ռ. Օլախի երկրին Շտեֆան պարոնն՝ Օլախի երկրին զՀայ-յերն եհան ի հաւատէ, և զեկեղեցեստան քակեց զամէն բովանդակ¹:

1552 ի թվին Հայոց Ռ.Ա. Բունքարի 14. Տէր Ստեփանոս Հմմիածնու կարողիկոսն եկն ի Ֆրանգիստանու, ի լով քաղաքն, և անդ վաղճանեցաւ:

1552 թվ. Հայոց Ռ.Ա. մարտի 10, օրն հինգարթի. կամենից քաղաքն մեծ կրակ ընկաւ, և 16 ալբաւուաի կրպակ երեցաւ, և եօթն տունն Հայու:

1554 թվ. Ռ.Գ. Խոնդիքարն Սուլեյմանն զՄուստաֆան զիւր մեծ որդին էսպան:

1556 թվ. Ռ.Ե. Լուսինն և աստղն ընդ յիրար փակեցան, մայիսի 12, օրն երկուշաբթի. զոր տեսեալ բազմաց և Աստուեց փառս տուեալ հիացմամբ մեծաւ:

1560 Հայոց թվ. Ռ.Թ. ի կամենից քաղաքս՝ զժամացոյցն որ կոչի սահաթ, նորեցին և մեծագոյն շինեցին:

1560 Հայոց թվ. Ռ.Թ. Հոկտեմբեր 15. ՈՅ Տեսրոթ անուն յայտնեցաւ այսմ ժամանակիո. որ և զինքն Օլախի երկրի վիրայ պարոն անուանեց. և էր ինքն Սըրպ, այսինքն Արքաւութ. յետոյ զնաց ի քրիստոնէից կայսրն մօտ Ֆէրնանտըր (Փերտինանտոս Ա.) և կայսրն ետ նմա ոչ բազում ինչ զօրս և զամենայն կովոյ անօթք քալ պիտանիք, և թէ հրեղէն և թէ բոցեղէն, և թէ սրեղէն. և առաքեաց զինքն՝ որ դայր տիրէր ի վերայ Օլախաց երկրին.

1. Այս ճանօթք պժգալի գիպուտածին վրացք գար մի վերջ Երեմիա չէւեպէ Քէօմիւր, ժեան, երբացը Երան. կոմիտասայ, գրէ պյուշափ. « ի թվականութեանս Հայոց Ռ.Ի.ն, ի » Սէւով քաղաք երկիր Ուլախին, թագաւորն Ստեփան գաւանութեամբ Յունաց, բռնութեամբ » կարա Հայոց տուն ի Հայոց ազգէ, զրով, դարձուցանել յարզներ իւր, որք ընե նորս իշ-» խանութեամբ էին. և որք ոչ գարձնաւ նահանակեցան, Յորոց մինն ի քաղմաց խաչառուը » քահանակ ոմք, որ զերկու աշօն ենան. և զերկու ձեռուն և զոտուն և զիեռուն և զեատունիք » և գըրթունն նման Յակովիկ արար. և Ա. Պալքոյ անուն ումեմն զաւական քերթեցին, և » պլ զէսակն կատաման սպանին և զբազում: Դաշինք նոյն քահանայք էին Ռ.Ա. պատասխանը ».... (պակասէ):

վասն զի Օլախի երկրին մարդկան խիստ մեծ նեղութեան մէջ էին, և բար-
զումք չարշարան կրէին ի իւրեանց պիզծ պարոնէն, որ կոչէր Բէգրտ Օ-
լեքսանդրն . և էր ինքն զոռող աւել տասնապատիկ քան զթուիհանու ի վերայ
քրիստոնէից . մանաւանդ եւս առաւել ողորմելի Հայ ազգին զլուխն բազում
փորձանս յարոյց . զոր ոչ է արժան խօսել և կամ լսել ումեք . որպէս և կայ
ի գրիս յասաշագոյն¹, որչափ ինչ արար եղկելոյ Հայոց ազգին . բայց ինք-
նին Տէր հատուցէ չարին ըստ չարութեան իւրում, և ինքն լիցի վրէժինդիր
իւր ամենակարող զօրութեամբն . Եւ յորժամ եկն զօրովք իւրովք այս ա-
ռաջասացեալ Տեսրոթն, և մերձեցաւ ի յայդ խուժագուժ երկիրն Օլախացն,
նա այդ խարերայ շըններն՝ Օլախի մեծարարքն՝ ստեցին զիւրեանց երդումն,
որպէս և զրել էին նմա, թէ զու զաս նայ մեք զմեր պարոն կու սպաննեմք և
քեզ կու հնազանդիմք, որ դու լինիս մեր վրայ պարոն : Նա այս պեղծ Յու-
լիանսս փութանակի ժողովեց զամենայն երկիր իւր և մեծ և բազում զօրս,
կացոյց ընդ ձեռամբ իւրովք . և ինքն եկ և էջ ի խոդինն . և անդ եկաց եր-
կու երեք օր : Խորհուրդն պեղծին այդ էր, որ թէ հզօր ձեռամբ գայր այդ
ոմն Տեսրոթ իւր վերայ, նա ինքն անցնէր այս կողմն և փախստական եր-
թայր առ թագաւորն մեր Զիկմունդ . բայց ոչ ունէր բազում ինչ զօրս . և
զոր ինչ ունէր՝ և զայն եւս աշացուցին մեր իշխանք Վայլովեցքին,
որ երկեաւ և փախստական զնաց առ կայսրն Ֆերնանտ : Եւ այս անօրէնն
դարձաւ, և մեծաւ ուրախութեամբ զնաց և նստաւ իւր ժանդ պարոնութիւնն,
և զի ոչ էր տուեալ ի վերուստ՝ ոչ ինչ կարաց առնել . և վտոն որայ գրեալ
իսկ է, եթէ, ԱՇ կարէ մարդ առնել (առնուլ) յանձնէ և ոչ ինչ, եթէ ոչ իցէ
տուեալ նմա ի վերուստ :

1561 Հայոց թվ. Ուժորդի, Նոյեմբեր ամսեանն ԺԴորդի . Փառք Աս-
տուծոյ Հօր անմահի, և Ուրբոյն Աստուծոյ Միածնի, և Ս. Հոգույն ճշմար-
տի. այժմ և յաւէտ յաւիտեանս . ամէն : Որ ետ մեզ կարողաւթիւն համբե-
րութեան իւր ամենազօր մարդասիրութեամբն . և հասոյց զմեզ յայսմ ժա-
մուս, զոր տեսաք զհալածումն և աւարումն նեղլաց և հայածչաց մերոց . որ-
պէս և զրեալ կայ ի զրին այսմ առաջագոյն, եթէ որչափ փորձանս և հա-
լածումն յարուցին ի վերայ ողորմելի և մասիրացեալ ազգին մերոյ, այդ
խուժագուժ երկրին իշխանն, որ կոչի Օլախաց, ամբարիշտ և պիղծ պարոն
Ալեքսանդր, որ էր որդին կորստեանն և մարզն անօրէնութեան, ժառանգ
զժոխոց և Նեռան կարապետն, հպարտացեալ ի վերայ փառաց իւրոց, իրեւ-
զատանայ . համարձակեցաւ ետ պիղծ և լիրը անզգամութեամբ զայսչափ ան-
օրէնութիւն գործել, զոր զրեալ կայ ի զրիս : Խսկ բարեզութ և մարդա-
սէրն Աստուծ վասն այսչափ նորա անօրէն շարագործութեանն համբերեաց,
և ոչ ի նոյն ժամու զնա պատուհասեաց . նայ և մեզ ետ համբերութիւն մինչեւ
իսպատ . յաւէլ իւր բարձր բազկաւ և հզօր ձեռամբ յարուցանել ի վերոյ նո-
րին անօրէնութեան դէմ զայս ինչ :

Ոմն Տեսրոթ անուն գուքս յայտնեցաւ ի յաշխարհն Ֆրանգաց առ քրիստոնէից
կայսրն, որ կոչի Ֆերնանտ . և եկաց առ նա ի մանկութենէ հասակէ մին-
չեւ ի շափ կատարեալ հասակի . ապա յետ այնորիկ եգիտ իւր արժան զոմն

1. ԱՇ յատաշ այլ յետոց քիչ մ' աւելի երկար դրաւծ է, ինչպէս աեսէ ընթերցակն :

2. Ատկայն հաւանական է թէ երկարօրէն այլ դրած ըլլար հեղինակն, նա և Շահքանին
հալածանըր :

մեծ իշխան՝ որկոչի Վլաւքիյ, և էր ի Լեհիցաշին արհէն այդ Վլաւքիյն, և ընդ նմա միաբան և համախոհ եղեւ։ Եւ էր այս Տեսրոթն դուքսն կարի աղքատ և անզօր։ վասն զի անօրէն ազգն իսմայէլացիքն որք կոչին՝ զնորա հայրենիք ափշտակել էին զամենայն ինչ։ և ապա այս բարեպաշտ ոմն որ կոչէր Վլաւքիյ, բազում զաւառ ունէր, և լ բերդ ու քաղաք և զիւզք, զամենայն զոր ինչ ունէր՝ եղ գրաւական, և էառ բազում գանձ. և Ալտուծոյ սզնութեամբ զօրք ժողովեց և կացոյց զօրավարս և զօրագլուխս, հազարա-պետո, հարիւրապետո, յիսնապետո և տասնապետո. և զզէնս պատերազմի, սրեղէն, հրեղէն և բոցեղէն, բազում և անթիւ անօթք, Եւ էառ զայս դուքսն և եկն ի այդ խուժադուժ երկրին իշխանին վերայ, որ կոչէր Ամերշանտր, կրկին անկամ, որպէս զրեալ կայ ի զիրս՝ զառախազոյն զալուստն իւր յառաջին թղթին, եթէ որպէս դարձուցին և փախուցին Լեհից մեծարարքն, վասն շնորհ առնելոյ այդ կրկին Յուլիանոսին. բայց մեք զեք զերկրորդ գալուստն նորա այժմ գրեմք։ Եւ յորժամ եկն և մերձեցաւ ի այդ անօրէնին երկիրն զօրովք և ամենայն ընչիւք իւրովք, փութանակի էանց զջուրն՝ որ կոչ Տուրուցու գետ. և այդ անօրէնն ի Պոթշանն (Պոթուշան) էր, բայց ի վերայ ճանապարհին զօրքն իւր եղեալ էր ասպատակութիւն ոչ բազում ինչ, որ դիտէին զնանապարհն նոցա. և ինքն անկեալ էր ի արբեցութիւն, ի յուտել և ի ըմպել, և իւրովք ամենայն իշխանօք, փողովք և տաւուլովք յաղագո ու բախութեամն։

Է. Երեք շորս դրի չափ բան մե տւրուտե է այս տեղ, գուցէ յիշած տեղեաց թիւն էր։

Շարայարելի

